

## **ՈՒՂԵՑՈՒՅՑ**

**ԱՌԱՆՁԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ  
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՓՈՐՁԱԳԵՏԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
1. ՓՈՐՁԱԳԵՏԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....	4
2. ՓՈՐՁԱԳԵՏԻ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՁԵՎԸ, ՆՊԱՏԱԿԸ, ՊԱՀԱՆՁՆԵՐԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ.....	17

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն ուղեցույցը կազմվել է վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից՝ 2018 թվականի մարտի 23-ի «Հանրային ծառայության մասին» ՀՕ-206-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) հիման վրա ընդունված «Առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգը և դեպքերը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման (այսուհետ՝ Որոշում) կիրառումն ապահովելու նպատակով:

Ուղեցույցի նպատակն է օժանդակել պետական մարմիններին առանձին խնդիրների իրականացման համար փորձագետների ներգրավման հետ կապված հարաբերությունների կարգավորման գործընթացում:

## 1. ՓՈՐՃԱԳԵՏԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Փորձագետը պետական մարմնում քաղաքացիական աշխատանք կատարող անձն է, որը պետական մարմնի կողմից ներգրավվում է Որոշմամբ սահմանված դեպքերից որևէ մեկով, ընդ որում՝ փորձագետ աշխատելու ժամանակահատվածը ներառվում է հանրային ծառայության ստաժում:

Որոշմամբ առանձնացվել են պետական մարմիններում փորձագետի ներգրավման հետևյալ չորս դեպքերը՝

1/ պետական մարմնին վերապահված գործունեության ոլորտում որոշակի ծրագրերի իրականացման.

2/ պետական մարմնի կանոնադրական խնդիրներից բխող որոշակի ժամկետով ծրագրերի իրականացման.

3/ պետական մարմնի կանոնադրական խնդիրներից բխող կոնկրետ հանձնարարականների իրականացման.

4/ պետական մարմնի կանոնադրական խնդիրներից բխող կոնկրետ գործառույթի իրականացման ծավալների կտրուկ ավելացման:

Վերը թվարկված 1-3-րդ դեպքերում պետական մարմնի հայեցողությանն են վերապահված փորձագետ ներգրավելու ժամանակահատվածը և աշխատավարձի չափը, իսկ 4-րդ դեպքի համար Որոշմամբ սահմանվում է, որ փորձագետ ներգրավվում է մինչև մեկ տարի ժամանակահատվածով, ընդ որում, տվյալ դեպքում փորձագետի հիմնական աշխատավարձը սահմանվում է այդ գործառույթն իրականացնող քաղաքացիական ծառայողի հիմնական աշխատավարձի նվազագույն չափով:

**Վերոնշյալ չորրորդ դեպքով պայմանավորված վարձատրության չափին և ժամկետներին վերաբերող օրինակ՝**

1) Ֆինանսների նախարարության իրավաբանական վարչությունում փորձագետ,

2) ութ ամիս ժամկետով,

3) աշխատավարձը 175,932 դրամ, որը համապատասխանում է քաղաքացիական ծառայողի մասնագիտական պաշտոնների 3-րդ ենթախմբին համապատասխանող սանդղակի նվազագույն գործակցին և բազային աշխատավարձի արտադրյալին):

Փորձագետ ներգրավելու համար համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարը մարմնի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում փորձագետների կողմից իրականացվող աշխատանքների ծրագիրը, իսկ Հանրապետության նախագահի և վարչապետի աշխատակազմերում փորձագետների կողմից իրականացվող աշխատանքների ծրագրերը համապատասխանաբար հաստատում են Հանրապետության նախագահի կամ վարչապետի աշխատակազմերի ղեկավարները:

Աշխատանքների ծրագրում ներառվում են՝

- փորձագետ ներգրավելու դեպքը և հիմնավորումները.
- աշխատանքների իրականացման ժամանակահատվածը.
- ակնկալվող արդյունքը.
- հաշվետվություններ ներկայացնելու ժամկետները.
- աշխատանքների գնահատման չափանիշները.
- աշխատանքների գնահատման արդյունքների ամփոփման ժամկետները.
- աշխատանքները կատարելու համար փորձագետին ներկայացվող պահանջները:

Բացի այդ, Հանրապետության նախագահի կամ վարչապետի աշխատակազմերի ղեկավարներն իրականացնում են նաև Որոշմամբ գլխավոր քարտուղարին վերապահված լիազորությունները:

Իսկ այն պետական մարմինը, որը չունի գլխավոր քարտուղար, Որոշմամբ գլխավոր քարտուղարին վերապահված լիազորություններն իրականացնում է այդ

մարմնի ղեկավարը: Օրինակ՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը ենթակա Լեզվի կոմիտեն չունի գլխավոր քարտուղար և գլխավոր քարտուղարին Որոշմամբ վերապահված լիազորությունները իրականացնում է Լեզվի կոմիտեի նախագահը:

Փորձագետ ներգրավելու նպատակով գլխավոր քարտուղարը համապատասխան պետական մարմնի պաշտոնական կայքում հրապարակում է հայտարարություն, իսկ դրա անհնարինության դեպքում տվյալ մարմնի վերադաս մարմնի պաշտոնական կայքում: Օրինակ, եթե Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը ենթակա Լեզվի կոմիտեն չունի պաշտոնական կայքէջ, ապա հայտարարությունը հրապարակվում է վերոնշյալ նախարարության կայքէջում:

Հայտարարությունը հրապարակվում է աշխատանքների ծրագիրը հաստատվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Որոշմամբ սահմանվում են հայտարարության մեջ պարունակող տեղեկությունները, մասնավորապես՝

- համապատասխան մարմնի անվանումը.
- ծրագրով նախատեսված աշխատանքների համառոտ նկարագիրը.
- փորձագետ ներգրավելու ժամկետը.
- փորձագետի պարտականությունները.
- փորձագետին ներկայացվող պահանջները (օրինակ՝ բարձրագույն կրթություն, հանրային ծառայության ոլորտում առնվազն երեք տարվա ստաժ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, համապատասխան ոլորտի իրավական ակտերի իմացություն, տիրապետում է անգլերեն լեզվին (գերազանց կամ լավ), համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, ինչպես նաև ունի տվյալ ոլորտի ծրագիր կամ կանոնակարգ մշակելու փորձառություն).
- դիմումների ներկայացման վերջնաժամկետը, որը պետք է լինի տվյալ հայտարարության հրապարակմանը հաջորդող երրորդ աշխատանքային օրը.

- աշխատանքի վայրը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն.
- հայտարարություն Որոշմամբ նախատեսված սահմանափակումների բացակայության մասին.
- Որոշմամբ նախատեսված պաշտոնատար անձի կողմից ընտրություն կատարելու եղանակը: Այդ եղանակներն են՝ դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրությունը, ինքնակենսագրականների ուսումնասիրությունը, հարցազրույցը, խմբային քննարկումը և այլն.
- անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը (օրինակ՝ կրթության մասին վկայող փաստաթուղթ, ինչպես նաև պահանջվող որակավորումն ու աշխատանքային ստաժը հավաստող փաստաթղթեր, անձնագրի կամ նույնականացման քարտի պատճեն և այլն):

Քաղաքացին դիմումը և փաստաթղթերը ներկայացնում է անձամբ կամ համապատասխան մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով: Եթե քաղաքացին դիմումը և փաստաթղթերը ներկայացնում է անձամբ, ապա անմիջապես ստանում է համապատասխան հավաստում փաստաթղթերը ներկայացված լինելու վերաբերյալ, իսկ էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկելու դեպքում համապատասխան հավաստումը ստանում է մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

Փաստաթղթերը ներկայացնելու ժամկետի ավարտից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարը կատարում է ընտրություն և առաջարկում է կնքել պայմանագիր:

Ընտրություն կատարելու եղանակը (դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն, ինքնակենսագրականների ուսումնասիրություն, հարցազրույց, խմբային քննարկում և այլն) որոշում է համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարը, և պայմանավորված ընտրություն կատարելու եղանակից՝ հայտարարության մեջ նշվում է նաև այն փաստաթղթերի ցանկը, որոնք անհրաժեշտ են հայտարարության մեջ նշված ընտրության անցկացման համար: Օրինակ՝ եթե ընտրությունը կատարվելու է

ինքնակենսագրականի հիման վրա, ապա հայտարարության մեջ նշվում է, որ հավակնորդը ներկայացնում է նաև ինքնակենսագրություն:

Ընտրություն կատարելու նպատակն է պարզելու հավակնորդի գիտելիքները, գործնական և մասնագիտական կարողությունները, փորձառությունը, հմտությունները, տրամաբանելու և արագ կողմնորշվելու ունակությունը, բարձրացված հարցերի վերաբերյալ կառուցողական լուծում առաջարկելու ունակությունը, անձնային որակները:

Եթե հավակնորդը պայմանագիր կնքելու առաջարկությունն ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում չի կնքում կամ հրաժարվում է կնքել պայմանագիր, ապա գլխավոր քարտուղարը մեկ աշխատանքային օրվա ընթացքում նման առաջարկությամբ դիմում է փորձագետ ներգրավելու համար դիմած այլ հավակնորդների:

Եթե փորձագետ ներգրավելու համար հրապարակված հայտարարության պահանջները բավարարող հավակնորդի կողմից դիմում չի ներկայացվել կամ դիմում ներկայացրած հավակնորդը չի բավարարում տվյալ հրապարակած հայտարարության պահանջները կամ փորձագետ չի ընտրվում, ապա համապատասխան մարմինը սույն Որոշմամբ նախատեսված ժամկետի հաջորդ աշխատանքային օրը դրա մասին տեղեկություն է հրապարակում իր պաշտոնական կայքէջում, իսկ դրա անհնարինության դեպքում իր վերադաս մարմնի պաշտոնական կայքէջում և հրապարակում է նոր հայտարարություն: Եթե երեք անգամ անընդմեջ հրապարակված հայտարարության պահանջները բավարարող հավակնորդի կողմից դիմում չի ներկայացվել կամ դիմում ներկայացրած հավակնորդը չի բավարարում տվյալ հրապարակած հայտարարության պահանջները կամ երեք անգամ անընդմեջ փորձագետ չի ընտրվում, ապա համապատասխան մարմինն իր պաշտոնական կայքէջում, իսկ դրա անհնարինության դեպքում իր վերադաս մարմնի պաշտոնական կայքէջում հրապարակում է նոր հայտարարություն՝ վերջին հայտարարության հրապարակումից մեկ ամիս հետո:



Որոշմամբ նախատեսված է, որ այն հավակնորդը, որը չի ընտրվել փորձագետ կարող է դիմել համապատասխան պետական մարմին՝ ստանալու գրավոր տեղեկատվություն իր չընտրվելու վերաբերյալ: Համապատասխան մարմինը գրավոր տեղեկատվության մեջ նշում է, օրինակ, որ հավակնորդը չի համապատասխանում հայտարարության մեջ նշված պահանջներին կամ հարցազրույցի եղանակով անցկացվող ընտրության դեպքում հավակնորդը չունի տվյալ ծրագրի իրականացման համար պահանջվող համապատասխան գիտելիքներ և այլն:

Չի թույլատրվում հավակնորդի հետ պայմանագիր կնքել, եթե տվյալ հավակնորդը պաշտոնից ազատվել կամ նրա ծառայությունը վերջին մեկ տարվա ընթացքում դադարեցվել է՝

- կարգապահական տույժ կիրառելու,
- օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու,
- օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու,
- «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու,
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու,
- ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի (բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք),
- երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու դեպքերում:

Որոշմամբ նախատեսված է դիմումի ձև, որի համաձայն ներկայացվում են անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները՝ փորձագետ ներգրավվելու համար: Դրանք են՝

- անձնագիր (ՀԾ համարանիշ).
- դիպլոմ (դիպլոմներ).
- աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթուղթ.
- գինվորական գրքույկ և այլ:

Որոշմամբ նախատեսված է, որ համապատասխան մարմինը փորձագետ ներգրավելու դեպքում քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում տեղադրում է փորձագետի կողմից իրականացվող աշխատանքային ծրագիրը և պայմանագրի պատճենը փորձագետի հետ պայմանագիր կնքելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, իսկ աշխատանքի գնահատման արդյունքները՝ արդյունքներն ամփոփելուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Սակայն մինչև տեղեկատվական հարթակի գործարկումը, համապատասխան մարմինները փորձագետի հետ պայմանագիր կնքելուց հետո վերոնշյալ ժամկետում տեղեկատվական հարթակում տեղադրվող փաստաթղթերն ուղարկում են Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ:

Պետական մարմինն վերապահված **գործունեության ոլորտում որոշակի ծրագրերի իրականացման** դեպքում փորձագետ է ներգրավվում, եթե պետական մարմնի գործունեությամբ պայմանավորված անհրաժեշտ է իրականացնել նոր ծրագիր, որի իրականացման համար նպատակահարմար է ներգրավել համապատասխան ոլորտի փորձագետ, քանի որ համապատասխան մարմինը չունի տվյալ ծրագրի իրականացման համար պահանջվող անհրաժեշտ մասնագետ (փորձագետ):

### **Օրինակ՝**

1) Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տեղական ինքնակառավարման քաղաքականության վարչությանը հանձնարարվել է մշակել համայնքների զարգացման ռազմավարության թվայնացման հայեցակարգ, որի իրականացման համար նպատակահարմար է ներգրավել համապատասխան ոլորտի փորձառու մասնագետ, իսկ համապատասխան մարմինը չունի տվյալ հայեցակարգի իրականացման համար պահանջվող անհրաժեշտ մասնագետ (փորձագետ),

2) փորձագետը ներգրավվում է մեկ տարի չորս ամիս ժամկետով,

3) փորձագետը մեկ տարի չորս ամսվա ընթացքում իրականացնելու է ծրագրով նախատեսված աշխատանքը, մասնավորապես՝

ա. համայնքների համաչափ զարգացման ռազմավարության թվայնացման վերաբերյալ օրակարգի մշակում,

բ. համայնքներում ենթակառուցվածքների բնագավառում առկա վիճակի վերլուծության, խնդիրների վերհանման և ենթակառուցվածքների զարգացման վերաբերյալ ներկայացված առաջարկությունների թվայնացում,

գ. համայնքների համաչափ զարգացմանն ուղղված նորարարական և ներդրումային ներկայացված ծրագրի տեխնիկական առաջադրանքի մշակում,

դ. համայնքների սոցիալ-տնտեսական կարիքների քարտեզագրման և համայնքային կարողությունների համադրման ու համեմատական վերլուծության մեթոդաբանության մշակում,

4) փորձագետը եռամսյակը մեկ ներկայացնում է հաշվետվություններ,

5) աշխատանքը գնահատվում է, ըստ փուլերի՝ երեք ամիսը մեկ և ամփոփիչ փուլ: Աշխատանքը գնահատվում է եռամսյակը մեկ ներկայացված հաշվետվությունների հիման վրա, որի արդյունքում երևում է, թե տվյալ ժամանակահատվածում փորձագետն իր առջև դրված խնդիրների որ մասն է իրականացրել: Կատարած աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց,

6) տնտեսագիտություն մասնագիտությամբ բարձրագույն կրթություն, հանրային ծառայության ոլորտում առնվազն հինգ տարվա ստաժ կամ առնվազն չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման ոլորտների իրավական ակտերի իմացություն, տիրապետում է ռուսերեն (գերազանց) և անգլերեն (լավ) լեզուներին, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, ինչպես նաև տվյալ ոլորտի հայեցակարգ մշակելու անհրաժեշտ փորձառություն:

Պետական մարմնի **կանոնադրական խնդիրներից բխող որոշակի ժամկետով ծրագրերի իրականացման** դեպքում փորձագետ է ներգրավվում, եթե համապատասխան մարմնի կանոնադրությամբ նախատեսված խնդիրների իրագործման նպատակով անհրաժեշտ է որոշակի ժամկետով կոնկրետ ծրագրի իրականացման համար փորձագետի ներգրավում, իսկ համապատասխան մարմինը չունի տվյալ ծրագրի իրականացման համար պահանջվող անհրաժեշտ մասնագետ (փորձագետ):

### **Օրինակ՝**

1) Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հանրակրթության վարչության կողմից նախատեսվում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 30-ը միջնակարգ դպրոցների համար մշակել այլընտրանքային կրթական ծրագրի հայեցակարգն ու մեթոդաբանությունը, իսկ համապատասխան մարմինը չունի տվյալ ծրագրի իրականացման համար պահանջվող անհրաժեշտ մասնագետ (փորձագետ),

2) փորձագետը ներգրավվում է երկու տարի ժամկետով,

3) փորձագետը երկու տարվա ընթացքում իրականացնելու է ծրագրով նախատեսված աշխատանքը, մասնավորապես՝

ա. այլընտրանքային կրթության վերաբերյալ առարկայական ծրագրերի և ուսումնական պլանների մշակում,

բ. այլընտրանքային կրթության կազմակերպման ձևերի, միջոցների և մեթոդների միջազգային փորձի ուսումնասիրում և հայեցակարգի մշակում,

գ. այլընտրանքային կրթական ծրագրերի չափորոշիչների մշակում,

դ. առաջարկվող այլընտրանքային կրթական ծրագրի ներդրման դեպքում ակնկալվող նախնական արդյունքի վերաբերյալ տեղեկատվության ներկյացում,

4) փորձագետը չորս ամիսը մեկ ներկայացնում է հաշվետվություններ,

5) աշխատանքը գնահատվում է, ըստ փուլերի՝ չորս ամիսը մեկ և ամփոփիչ փուլ: Աշխատանքը գնահատվում է չորս ամիսը մեկ ներկայացված հաշվետվությունների հիման վրա, որի արդյունքում երևում է թե տվյալ

Ժամանակահատվածում փորձագետն իր առջև դրված խնդիրների որ մասն է իրականացրել: Կատարած աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց,

6) բարձրագույն կրթություն, հանրային ծառայության ոլորտում առնվազն երեք տարվա ստաժ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, տիրապետում է ռուսերեն (գերազանց) և անգլերեն (լավ) լեզուներին, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, ինչպես նաև կրթության ոլորտի ծրագրեր կամ հայեցակարգ մշակելու անհրաժեշտ փորձառություն:

Պետական մարմնի **կանոնադրական խնդիրներից բխող կոնկրետ հանձնարարականների իրականացման** դեպքում փորձագետ է ներգրավվում, եթե համապատասխան մարմնի կանոնադրությամբ պայմանավորված այնպիսի կոնկրետ հանձնարարական է տրվում, որի կատարման համար անհրաժեշտ է որոշակի մասնագիտական կարողություններ տիրապետող փորձագետ, իսկ համապատասխան մարմինը չունի տվյալ հանձնարարականի իրականացման համար պահանջվող անհրաժեշտ մասնագետ (փորձագետ):

### **Օրինակ՝**

1) Արդարադատության նախարարության մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի վարչությանը տրվել է հանձնարարական՝ մշակել իրավական կանոնակարգ՝ Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը համապատասխանեցնելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ընդունված որոշումների պահանջներին, որի իրականացման համար անհրաժեշտ է ներգրավել տվյալ ոլորտի համապատասխան մասնագետ, քանի որ պետական մարմինը չունի տվյալ հանձնարարականը իրականացնելու համար պահանջվող անհրաժեշտ մասնագետ (փորձագետ),

2) փորձագետը ներգրավվում է երեք տարի վեց ամիս ժամկետով,

3) փորձագետը երեք տարի վեց ամսվա ընթացքում իրականացնելու է հանձնարարականով պայմանավորված որոշակի աշխատանքներ, մասնավորապես՝

ա. մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակում,

բ. իրավական համակարգում մարդու իրավունքների եվրոպական չափանիշների ներդրման վերաբերյալ միջոցառումների ծրագրի մշակում,

գ. ՀՀ օրենսդրությունը մարդու իրավունքների միջազգային և եվրոպական իրավական չափանիշներին համապատասխանեցնելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,

դ. մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող իրավական կանոնակարգի մշակում,

ե. Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության վերաբերյալ կայացրած վճիռների և որոշումների մասին ամփոփ տեղեկատվության մշակում և ներկայացում,

4) փորձագետը կիսամյակը մեկ ներկայացնում է հաշվետվություններ,

5) աշխատանքը գնահատվում է, ըստ փուլերի՝ կիսամյակը մեկ և ամփոփիչ փուլ: Աշխատանքը գնահատվում է կիսամյակը մեկ ներկայացված հաշվետվությունների հիման վրա, որի արդյունքում երևում է թե տվյալ ժամանակահատվածում փորձագետն իր առջև դրված խնդիրների որ մասն է իրականացրել: Կատարած աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց,

6) միջազգային հարաբերություններ մասնագիտությամբ բարձրագույն կրթություն, հանրային ծառայության ոլորտում առնվազն հինգ տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, համապատասխան իրավական ակտերի իմացություն, տիրապետում է անգլերեն (գերազանց) և ֆրանսերեն (լավ) լեզուներին, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, ինչպես նաև մարդու

իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ոլորտի ծրագիր կամ կանոնակարգ մշակելու անհրաժեշտ փորձառություն:

Պետական մարմնի **կանոնադրական խնդիրներից բխող կոնկրետ գործառույթի իրականացման ծավալների կտրուկ ավելացման** դեպքում փորձագետ է ներգրավվում, եթե տվյալ մարմնին վերապահված գործառույթի ծավալն ավելանում է, և մարմինն այդ գործառույթն իրականացնելու համար է նպատակահարմար է գտնում մինչև մեկ տարի ժամկետով ներգրավել փորձագետ, այլ ոչ թե ստեղծել նոր հաստիքային միավոր, քանի որ մի որոշ ժամանակ անց աշխատանքների ծավալը կնվազի, և այդ հավելյալ աշխատանքների կարիքն այլևս չի լինի:

#### **Օրինակ՝**

- 1) Արդարադատության նախարարության իրավական ապահովման վարչության աշխատանքային ծավալը կտրուկ ավելացել է՝ պայմանավորված Արդարադատության նախարարության կողմից օրենսդրության կատարելագործման նպատակով մշակվող իրավական ակտերի ծավալի ավելացմամբ, և որի իրականացման համար նպատակահարմար է ներգրավել պայմանագրային հիմունքներով համապատասխան մասնագետ (փորձագետ),
  - 2) փորձագետը ներգրավվում է ութ ամիս ժամկետով,
  - 3) փորձագետը ութ ամսվա ընթացքում իրեն վերապահված գործառույթի շրջանակներում իրականացնելու է որոշակի աշխատանքներ, մասնավորապես՝
    - ա. ՀՀ օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,
    - բ. իրավական ակտերի նախագծերի մշակում,
    - գ. պետական մարմինների կողմից ստացված իրավական ակտերի փորձաքննության իրականացում,
    - դ. իրավական փորձաքննության ենթարկված իրավական ակտերի վերաբերյալ եզրակացությունների նախապատրաստում,

ե. ընդունված իրավական ակտերի վերաբերյալ ուղեցույցների մշակում,

զ. Հայեցակարգերի և միջոցառումների ծրագրերի մշակում,

4) փորձագետը չորս ամիսը մեկ ներկայացնում է հաշվետվություններ,

5) աշխատանքը գնահատվում է, ըստ փուլերի՝ չորս ամիսը մեկ և ամփոփիչ փուլ: Աշխատանքը գնահատվում է չորս ամիսը մեկ ներկայացված հաշվետվությունների հիման վրա, որի արդյունքում երևում է թե տվյալ ժամանակահատվածում փորձագետն իր առջև դրված խնդիրների որ մասն է իրականացրել: Կատարած աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց,

6) իրավագիտություն մասնագիտությամբ բարձրագույն կրթություն, հանրային ծառայության ոլորտում առնվազն երեք տարվա ստաժ կամ առնվազն երեք տարմա մասնագիտական աշխատանքային ստաժ, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, տիրապետում է ռուսերեն կամ անգլերեն լեզուներին (գերազանց), ինչպես նաև իրավական ակտերի մշակման փորձառություն:

**2. ՓՈՐՁԱԳԵՏԻ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՄԻՋԵՎ  
ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՁԵՎԸ, ՆՊԱՏԱԿԸ, ՊԱՀԱՆՁՆԵՐԸ  
ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

Որոշմամբ նախատեսված է պայմանագրի ձև, որը կնքվում է փորձագետի և համապատասխան պետական մարմնի միջև՝ ընտրություն կատարելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

Պայմանագիրը ներառում է պայմանագրի առարկան, կողմերի իրավունքներն ու պարտականությունները, աշխատանքի ռեժիմը և տևողությունը, արձակուրդը, վարձատրությունը, պայմանագրի փոփոխումը, լուծումը և դադարումը, պայմանագրի գործողության ժամկետները:

Պայմանագրի կետերից են՝



- պայմանագրով համապատասխան մարմինը փորձագետին հանձնարարում է իրականացնել որոշակի աշխատանքներ, որոնց նկարագրությունը նշվում է պայմանագրում,

- պայմանագրում նշվում է, թե փորձագետը անմիջականորեն ում է ենթարկվում, այսինքն՝ այն անձի անուն, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը, ում ենթակայության տակ իրականացնելու է իր աշխատանքների ծրագիրը,

- պայմանագրում նշվում է վարձատրության չափը, որն իրականացվում է համապատասխան մարմնի տնտեսված միջոցներից, ինչպես նաև օրենքով չարգելված այլ միջոցներից,

- փորձագետի համար պայմանագրով նախատեսված աշխատանքը կարող է համարվել կամ հիմնական կամ համատեղությամբ,

- փորձագետին տրամադրվում է միայն ամենամյա նվազագույն արձակուրդ՝ 20 աշխատանքային օր տևողությամբ, ինչպես նաև նպատակային արձակուրդ, իսկ լրացուցիչ արձակուրդ չի տրամադրվում: Նպատակային արձակուրդի տեսակներն են՝ հղիության և ծննդաբերության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող կամ ուսումնական կամ պետական կամ հասարակական արձակուրդները,

- համապատասխան մարմինն իրավունք ունի ցանկացած պահին ստուգելու փորձագետին հանձնարարված աշխատանքների կատարման ընթացքը, ինչպես նաև փորձագետին ներգրավելու արտաժամյա աշխատանքների, որի տևողությունն իրար հաջորդող երկու օրերի ընթացքում չի կարող գերազանցել 4 ժամը,

- փորձագետի համար աշխատանքային օրվա սկիզբը և ավարտը սահմանվում է պայմանագրով,

- փորձագետի համար հավելավճարներ, պարգևատրումներ, լրավճարներ չեն սահմանվում՝ բացառությամբ պետական մարմնի կանոնադրական խնդիրներից բխող կոնկրետ գործառույթի իրականացման ծավալների կտրուկ ավելացմամբ պայմանավորված փորձագետ ներգրավելու դեպքի: Այս դեպքում ներգրավված փորձագետին կարող է տրվել պարգևատրում,

- փորձագետին արտաժամյա, գիշերային, հանգստյան և ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին աշխատանքների ներգրավելու դեպքում վարձատրությունը սահմանվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված նվազագույն չափերով,

- փորձագետը պարտավոր է պահպանել համապատասխան մարմնում սահմանված աշխատանքային ներքին կարգապահական կանոնները, մասնավորապես՝ աշխատանքային կարգապահությունը, աշխատանքի ռեժիմը, հանգստի ժամանակը պահպանելը և այլն:

<b>Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր N 7</b>	
ք. Երևան	« 01 » մայիսի 2019 թ.
<p>Աշխատանքի և սոցիական հարցերի նախարարության՝ (այսուհետ՝ համապատասխան մարմին) ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Ս. Պողոսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա մի կողմից, և Տիգրան Արմենի Հակոբյանի գրանցված քաղաք Երևան, Աբովյան փող, 67 շենք, անձնագիր թիվ 5610660130, տրված 07.07 2017 թ. (այսուհետ՝ փորձագետ) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝</p> <p><b>1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ</b></p> <p>1.1. Համապատասխան մարմինը փորձագետին հանձնարարում է իրականացնել որոշակի աշխատանքներ, որոնց նկարագրությունը նշված է սույն պայմանագրի 1.3-րդ կետում և պարտավորվում է վճարել նրա կատարած աշխատանքի համար, իսկ փորձագետը պարտավորվում է կատարել հանձնարարված աշխատանքները սույն պայմանագրով սահմանված պայմաններով:</p>	

1.2. Փորձագետն անմիջականորեն ենթարկվում է աշխատանքի և զբաղվածության վարչության պետին՝ Կարեն Հակոբի Պողոսյանին: Աշխատանքների կատարման վայրն է՝ համապատասխան մարմնի գտնվելու վայրը:

1.3. Սույն պայմանագրով փորձագետին առաջադրվող աշխատանքը ներառում է՝

1) աշխատաշուկայի ուսումնասիրություն և առաջարկությունների ներկայացում,

2) ըստ ոլորտների ներկայացնել բնակչության զբաղվածությունը,

3) ուսումնասիրել և ներկայացնել աշխատաշուկայի պահանջարկի գնահատման վերաբերյալ ծրագրի առաջարկ:

1.4. Փորձագետի համար սույն պայմանագրով նախատեսված աշխատանքը համարվում է հիմնական (հիմնական, համատեղությամբ):

## **2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1. Փորձագետը պարտավորվում է՝

2.1.2. Բարեխղճորեն կատարել սույն պայմանագրով ստանձնած աշխատանքները:

2.1.3. Պահպանել համապատասխան մարմնում սահմանված ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը:

2.1.4. Պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները:

2.1.5. Իրականացնել աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» օրենքով և սույն պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականությունները:

2.2. Փորձագետն իրավունք ունի՝

2.2.1. Սույն պայմանագրի 4-րդ կետի համաձայն ստանալու վարձատրություն:

2.2.2. Պահանջելու համապատասխան մարմնից ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իր հանգստի իրավունքը:

2.2.3. Իրականացնելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն պայմանագրով իրեն վերապահված այլ իրավունքներ:

2.3. Համապատասխան մարմինը պարտավորվում է՝

2.3.1. Սույն պայմանագրի 4-րդ կետի համաձայն վճարել փորձագետի աշխատավարձը:

2.3.2. Սահմանված կարգով փորձագետին տրամադրել ամենամյա և նպատակային արձակուրդ:

2.3.3. Ապահովել անվտանգ և առողջության համար անվնաս աշխատանքային պայմաններ:

2.3.4. Փորձագետին ծանոթացնել կազմակերպությունում գործող ներքին կարգապահական կանոններին, աշխատանքի պաշտպանության և հակահրդեհային անվտանգության ապահովման պահանջներին:

2.3.5. Ժամանակին ապահովել փորձագետին անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով:

2.3.6. Փորձագետի անձնական տվյալները մշակելիս պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պահանջները:

2.3.7. Իրականացնել աշխատանքային օրենսդրությամբ և սույն պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

2.4. Համապատասխան մարմինն իրավունք ունի՝

2.4.1. Ցանկացած պահին ստուգելու փորձագետին հանձնարարված աշխատանքների կատարման ընթացքը:

2.4.2. Փորձագետին ներգրավելու արտաժամյա աշխատանքների, որի տևողությունն իրար հաջորդող երկու օրերի ընթացքում չի կարող անցնել 4 ժամը:

2.4.3. Իրականացնելու աշխատանքային օրենսդրությամբ և սույն պայմանագրով իրեն վերապահված այլ իրավունքներ:

### **3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՌԵԺԻՄԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ, ԱՐՁԱԿՈՒՐԴԸ**

3.1. Փորձագետի համար սահմանվում է աշխատաժամանակի նորմալ տևողություն: Աշխատանքային օրվա սկիզբը սահմանվում է ժամը 9.00, ավարտը՝ ժամը 18.00:

3.2. Փորձագետին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրվում է ամենամյա նվազագույն արձակուրդ՝ 20 աշխատանքային օր տևողությամբ:

#### **4. ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ**

4.1. Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների իրականացման համար համապատասխան մարմինը փորձագետին յուրաքանչյուր ամիս վճարում է հիմնական աշխատավարձ 256.577 (երկու հարյուր հիսունվեց հազար հինգ հարյուր յոթանասունյոթ) դրամ:

4.2. Փորձագետին արտաժամյա, գիշերային, հանգստյան և ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին աշխատանքների ներգրավելու դեպքում վարձատրությունը սահմանվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված նվազագույն չափերով:

#### **5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ, ԼՈՒԾՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐՈՒՄԸ**

5.1. Սույն պայմանագիրը կարող է փոփոխվել և լրացվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ աշխատանքային օրենսգրքով նախատեսված դեպքերի: Սույն պայմանագրի փոփոխությունները և լրացումները կատարվում են լրացուցիչ համաձայնագրերով, որոնք կհանդիսանան սույն պայմանագրի անբաժան մասը:

5.2. Սույն պայմանագիրը լուծվում է աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված կարգով և դեպքերում, ինչպես նաև առանձին խնդիրների

իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգի խախտմամբ կնքված լինելու դեպքերում:

## **6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2022 թվականի դեկտեմբերի 30-ը:

## **7. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

7.1. Սույն պայմանագրով չկարգավորված բոլոր հարցերը ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.2. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունների չկատարման, կամ անպատշաճ կատարման համար պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.3. Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Համապատասխան մարմինը  
գլխավոր քարտուղար  
Ա. Ս. Պողոսյան

\_\_\_\_\_

(ստորագրությունը)

Փորձագետը  
Տիգրան Արմենի Հակոբյան

\_\_\_\_\_

(ստորագրությունը)

## **ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՁԵՎԸ**

### **1. ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԴԵՊՔԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ**

Արդարադատության նախարարության իրավական ապահովման վարչության աշխատանքային ծավալը կտրուկ ավելացել է՝ պայմանավորված Արդարադատության նախարարության կողմից մշակվող իրավական ակտերի ծավալի ավելացմամբ, և որի իրականացման համար նպատակահարմար է ներգրավել պայմանագրային հիմունքներով համապատասխան մասնագետ (փորձագետ):

### **2. ՓՈՐՁԱԳԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

Իրավագիտություն մասնագիտությամբ բարձրագույն կրթություն, հանրային ծառայության ոլորտում առնվազն երեք տարվա ստաժ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, տիրապետում է ռուսերեն կամ անգլերեն լեզուներին (գերազանց), ինչպես նաև իրավական ակտերի մշակման փորձառություն:

### **3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ**

Փորձագետը ներգրավվում է ութ ամիս ժամկետով:

### **4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ**

1) Փորձագետը ութ ամսվա ընթացքում իրականացնելու է ծրագրով նախատեսված աշխատանքները, մասնավորապես՝

ա. ՀՀ օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,

բ. իրավական ակտերի նախագծերի մշակում,

գ. պետական մարմինների կողմից ստացված իրավական ակտերի փորձաքննության իրականացում,

դ. իրավական փորձաքննության ենթարկված իրավական ակտերի վերաբերյալ եզրակացությունների նախապատրաստում,

ե. ընդունված իրավական ակտերի վերաբերյալ ուղեցույցների մշակում,

զ. հայեցակարգերի, կանոնակարգերի և միջոցառումների ծրագրերի առաջարկների մշակում:

2) Կատարած աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

## **5. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐ**

Փորձագետը չորս ամիսը մեկ ներկայացնում է հաշվետվություններ:

## **6. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

Աշխատանքը գնահատվում է ըստ փուլերի՝ չորս ամիսը մեկ և ամփոփիչ փուլ: Աշխատանքը գնահատվում է չորս ամիսը մեկ ներկայացված հաշվետվությունների հիման վրա, որի արդյունքում երևում է, թե տվյալ ժամանակահատվածում փորձագետն իր առջև դրված խնդիրների որ մասն է իրականացրել:

Գնահատման համար չափանիշերը սահմանվում են ըստ 4-րդ բաժնի առաջին կետի՝ «ա»-«զ»-ը ենթակետերով սահմանված արդյունքների:

Համապատասխանաբար, վերջնարդյունքների չափանիշերն են՝

ա. ՀՀ օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկությունները ներկայացվել են,

բ. իրավական ակտերի նախագծերը մշակված են,



գ. պետական մարմինների կողմից ստացված իրավական ակտերի փորձաքննությունն իրականացված է,

դ. իրավական փորձաքննության ենթարկված իրավական ակտերի վերաբերյալ եզրակացությունները նախապատրաստվել են,

ե. ընդունված իրավական ակտերի վերաբերյալ ուղեցույցները մշակված են,

զ. հայեցակարգերի և միջոցառումների ծրագրերի առաջարկները մշակվել են: